Հաստատում եմ
Դպրոցի տնօրեն՝ Գ. Խաչապետյան

# Ուսումնական նախագծային աշխատանքի պլան

Ուսումնական նախագծի ղեկավար՝ Նելի Ասատրյան

| Թեմա՝ Ո՞վ է կառավարում մեր ուշադրությունը | |
|---|---|
| Առարկա(ներ)՝ | Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն |
| Դասարան | 7ա |
| Ուսումնական նախագծի անվանում | Ո՞վ է կառավարում մեր ուշադրությունը |
| Ուսումնական տարի, կիսամյակ | 2025-2026 ուստարի, II կիսամյակ |
| Տևողություն՝ | 08.01-12.02 |
| Նախատեսված ժամաքանակ | 6 ժամ |
| Ուսումնական նախագծի իրականացման փուլերը | **1. Նախապատրաստական փուլ**<br>• Թեմայի ներկայացում և քննարկում<br>• Մարտահրավերային հարցի ձևակերպում<br>• Խմբերի ձևավորում<br>• Աշխատանքի պլանի կազմում<br>**2. Հետազոտական փուլ**<br>• Տեղեկատվության հավաքագրում տարբեր աղբյուրներից<br>• Հարցումների անցկացում<br>• Ստացված տվյալների վերլուծություն<br>• Օրինակների ուսումնասիրություն (գովազդներ, սոցիալական ցանցերի ալգորիթմներ)<br>**3. Վերլուծական և ստեղծագործական փուլ**<br>• Արդյունքների քննարկում<br>• Խնդրի լուծման առաջարկների մշակում<br>• Հարցաթերթերի, սլայդների, բուկլետների և տեսանյութի պատրաստում<br>**4. Ներկայացման փուլ**<br>• Խմբային աշխատանքների ներկայացում<br>• Քննարկում և հարցուպատասխան<br>• Ինքնագնահատում և փոխգնահատում<br>**5. Նախագծի ներկայացում** |

| | |
|---|---|
| Տեսակը | ✓ Թիմային |
| Չնաչափը | ներառարկայական<br>միջառարկայական |
| Տիպը՝ | Իրական կյանքին վերաբերող խնդիրներին միտված նախագիծ:<br>Դիրքորոշում ներկայացնող և պաշտպանող նախագիծ:<br>Չնաչափեր, մոտեցումներ նոր լուծումներ առաջարկող նախագիծ: |

**Ուսումնական նախագծի նպատակը**

- սովորողների մոտ ձևավորել գիտակցված վերաբերմունք սեփական ուշադրության նկատմամբ,
- հասկանալ, թե ինչ գործոններ են ազդում մարդու ուշադրության վրա (սոցիալական ցանցեր, գովազդ, մեդիա, տեխնոլոգիաներ, շրջապատ),
- զարգացնել ուշադրությունը կառավարելու հմտություններ:
- բացահայտել, թե ինչպես են թվային հարթակները պայքարում մարդու ուշադրության համար,
- սովորեցնել տարբերակել օգտակար և վնասակար տեղեկատվությունը,
- խթանել քննադատական մտածողությունը,
- զարգացնել ինքնակառավարման կարողությունը թվային միջավայրում:

**Ուսումնական նախագծի վերջնարդյունքները**

Սովորողների մոտ ձևավորել.

- Քննադատական մտածողություն
- Ինքնակառավարման և ինքնակարգավորման հմտություններ
- Տեղեկատվության վերլուծման կարողություն
- Թվային գրագիտություն
- Ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն
- Պատասխանատու և գիտակցված մեդիա օգտագործման մշակույթ

**Հիմնախնդիրը կամ մարտահրավերային հարցը**

Արդյո՞ք մենք ենք կառավարում մեր ուշադրությունը, թե՞ այն կառավարում են թվային տեխնոլոգիաները և մեդիան:

**Ուղղորդող հարցեր**

Սովորողները հետազոտությունն իրականացնելիս պետք է պատասխանեն հետևյալ հարցերին.

- Ի՞նչ է ուշադրությունը և ինչու է այն կարևոր:
- Ինչպե՞ս են սոցիալական ցանցերը պահում մեր ուշադրությունը:
- Ինչու՞ ենք հաճախ երկար ժամանակ անցկացնում հեռախոսով՝ առանց նպատակ ունենալու:
- Ինչպե՞ս են գովազդները ազդում մեր ընտրությունների վրա:
- Ի՞նչ մեթոդներով կարելի է պաշտպանել և կառավարել սեփական ուշադրությունը:
- Ի՞նչ կապ կա ուշադրության և հաջողության միջև:

| Կարողունակություններ, որոնք կզարգանան այս նախագծի ընթացքում |
| --- |
| Սովորել սովորելու կարողունակություն – որոնել, վերլուծել և դասակարգել տեղեկատվություն<br>☑Ինքնաճանաչողան և սոցիալական կարողունակություն – հասկանալ սեփական պատասխանատվությունը և վարքը առցանց<br>☑Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն – օգտագործել տեխնիկական գործիքներ, ծրագրեր և թարմացումներ<br>☑Լեզվական գրագիտություն և կարողունակություն – գրել հստակ հաղորդագրություններ, հասկանալ տեղեկատվության աղբյուրի արժեվորման կանոններ<br>☑Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն – պատասխանատու առցանց վարք, կիբերանվտանգության կանոնների պահպանում<br>☑Թվային և մեդիա կարողունակություն – թվային հմտությունների և մեդիա գրագիտության զարգացում: |
| Ուսումնական նախագծի նկարագիրը |

**I փուլ. Թեմայի ներկայացում և մոտիվացիա**
Թեման ներկայացնել՝ «Ո՞վ է կառավարում մեր ուշադրությունը»:
Քննարկել ուշադրության նշանակությունը մարդու կյանքում:
Խրախուսել սովորողներին արտահայտել սեփական կարծիքներն ու բերել օրինակներ առօրյայից:
Ձևակերպել հիմնական մարտահրավերային հարցը:
**II փուլ. Խնդրի ձևակերպում և պլանավորում**
Սահմանել հետազոտության նպատակը:
Առաջադրել ուղղորդող հարցեր:
Բաժանել սովորողներին խմբերի:
Բաշխել ենթաթեմաներ (սոցիալական ցանցեր, գովազդ, խաղեր, ժամանակի կառավարում և այլն):
Կազմել աշխատանքի պլան:
**III փուլ. Հետազոտական աշխատանք**
Հավաքագրել տեղեկություններ տարբեր աղբյուրներից:
Իրականացնել հարցումներ:
Ուսումնասիրել սոցիալական հարթակների ազդեցության մեխանիզմները:
Վերլուծել և համադրել ստացված տվյալները:
**IV փուլ. Արդյունքների մշակումը և ստեղծագործական աշխատանք**
Ամփոփել հետազոտության արդյունքները:
Ձևակերպել եզրակացություններ և առաջարկություններ:
Պատրաստել նախագծային արդյունք (սլայդային ներկայացում, պաստառ, բուկլետ կամ տեսանյութ):
**V փուլ. Ներկայացում և քննարկում**
Ներկայացնել խմբային աշխատանքները դասարանին:
Կազմակերպել քննարկում և հարցուպատասխան:
Իրականացնել ինքնագնահատում և փոխգնահատում:

| Միջառարկայական կապեր | | |
|---|---|---|
| հայոց լեզու | ☐ քիմիա | ☐ աշխարհագրություն |
| ☐ հայ գրականություն | ☐ հայոց պատմություն | ☐ երաժշտություն |
| ☑ օտար լեզուներ | ☐ կենսաբանություն | ☐ կերպարվեստ |
| ☐ մաթեմատիկա | ☐ բնագիտություն | ☑ ինֆորմատիկա |
| ☑ հասարակագիտություն | ☐ ֆիզիկա | ☐ պար |
| ☐ համաշխարհային պատմություն | ☐ մարմնակրթություն | ☐ բեմարվեստ |

| Ուսումնական նախագծի արտադրանքի/պրոդուկտի ներկայացման տեսակներ | |
|---|---|
| ☐ Ամսագիր կամ թերթ,պաստառ | ☐ Վեբ-կայք |
| ☐ Տեղեկատվական թերթիկ | ☑ Սահիկաշար, տեղադրում դպրոցի/համայնքի կայքէջում |

| | |
|---|---|
| ☐ Տեսանյութ | ☑ Սոցիալական զովազդ, հոլովակ |
| ☐ Ձայնվածք (փոդքասթ) | ☑ Բուկլետ |
| ☐ Դասընթացներ | ☐ Կլոր սեղան քննարկում |
| ☐ Ցուցահանդես | ☐ Ֆլեշմոբ/ տարածում կայքերում |
| ☐ Առաջարկ պատկան մարմիններին | ☐ Նամակ/ ուղերձ |
| ☑ Հարցաթերթեր | ☐ Մեղանի խաղ |

| Հետազոտության աղբյուրներ |
|---|
| ➢ Դասագրքեր (ինֆորմատիկա, մեդիագրագիտություն)<br>➢ Վստահելի կրթական կայքեր<br>➢ Հոդվածներ թվային կախվածության և ուշադրության մասին<br>➢ Սոցիալական ցանցերի ուսումնասիրություն (Instagram, TikTok, YouTube և այլն)<br>➢ Անցկացված հարցումների արդյունքներ<br>➢ Ուսուցչի կողմից տրամադրված նյութեր |

| **Գնահատում** |
|---|
| |

# Ով է կառավարում մեր ուշադրությունը

# Ինչ է ուշադրությունը

Ուշադրությունը մեր ուղեղի կարողությունն է կենտրոնանալ մի բանի վրա:
Սակայն այսօր դրա համար պայքարում են բազմաթիվ ազդակներ՝ հեռախոս, խաղեր, սոցցանցեր և նոթիֆիկացիաներ:
Մեր ուշադրությունը դարձել է ամենապահանջված «ռեսուրսը» թվային աշխարհում:

## Ինչպես պաշտպանել մեր ուշադրությունը

- Անջատել ավելորդ նոթիֆիկացիաները
- Սահմանել ժամանակ սոցցանցերի համար
- Հեռախոսը հեռու դնել դաս անելիս
- Կենտրոնանալ մեկ գործի վրա

Ուշադրությունը մեր ամենակարեվոր ռեսուրսն է

# Ինչպես են գրավում մեր ուշադրությունը

**ISTAGRAM** հավելվածը թույլ է տալիս տեղադրեղ սթորիներ ու ուղարկել նամակներ ինչը դուր է գալիս մեր ուղեղին

**SNAPCHAT** հավելվածը ունի շատ ֆունկցիաներ այն իր մեջ ներառում է ուրիշ ծրագրերի ֆունկցիաներ օրինակ զանգեր կատարել ուղարկել հաղորթագրություններ եվ այլն

Ամեն անգամ **TIKTOK** հավելվածը մեր ուղեղին առաջարկում է նոր նյութեր իսկ մեր ուղեղը սիրում է նոր նյութեր

**YOUTUBE** հավելվածը մեր ուղեղին տալիս է տարբեր բովանդակության տեսանյութեր որոնց վրա կենտրոնանալով կորցնում ենք ժամանակի զգացումը

# Ուշադրությունը թանկ գանձ է

Ուշադրությունը քո կյանքի ղեկն է:
Որտեղ դնում ես ուշադրությունդ,
այնտեղ է գնում քո էներգիան,
ժամանակդ ու ապագադ:
Եթե դու չես ընտրում՝ ինչին
ուշադրություն դարձնել, աշխարհը
կընտրի քո փոխարեն:
Ուստի եղիր զգոն, ընտրիր
գիտակցաբար և հիշիր.
քո ուշադրությունը ամենաթանկ
ռեսուրսն է, մի՛ վատնիր այն
պատահական բաների վրա:

# Ուսումնական նախագծային աշխատանք

# 7ա դասարան